

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼԻ ՆԻԻԹԵՐ

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Թ. Թօրամանանի

Հայ ճարտարագետութիւնն ալ ունեցեր է իր կիկլոպեան շրջանը: Ալէքսանդրապօլէն 6-7 վերստ դէպի արեւելք Տիրեկէր անունով մի գիւղ կայ, այս գիւղի եկեղեցին իւր բոլոր անսովոր յատկութիւններով կը տանի մեզ մինչև հեթանոսական դարերը: Եօթը բարձր աստիճանների վրայ կանգնած է շէնքը՝ վրան սազաշէն ծածկուած. արտաքուստ, առաջին նայուածքով կիւրոսի դամբարանի տպաւորութիւնը կը թողու: Երեք դուռ ունի, մէկը արեւմուտքէն, իսկ երկուքը հարաւէն: Արեւմտեան դուռը մուտք աւելի ուրիշ նպատակի մը համար շինուած է, որովհետև դռան շէմքը եօթներորդ աստիճանի վրայ է, և աստիճաններուն հորիզոնական լայնութիւններէ հազիւ 6-7 սանթիմետրի հասնեն: Ամենէն տարօրինակը այն է՝ որ լուսամուտ ամենևին չէ ունեցեր որևէ մէկ կողմին վրայ, նոյնպէս կիսաբոլորակ խորան: Այժմեան փոքր լուսամուտներ և ներքը պատարագի խորանը շիներ են այժմեան գիւղացիք, երբ 60-70 տարի առաջ գաղթիք են այդտեղ և օգտուելով վրատակ շէնքին գոյութենէն եկեցեայ վերածեր են: Եէնքի անմիջապէս շուրջը դստուած մեծաքանակ հեթանոսական գերեզմաններ և մեծ ու փոքր դամբաններ կը վկայեն որ այս շէնքը հեթանոս հասարակութեան մը կը պատկանէր: Եօթը աստիճաններու վրայ բարձրացած նեղ ու երկայն քառակուսի ձևը և բոլորովին առանց լուսամուտի շրջապատուած հեթանոսական գերեզմաններով այս շէնքը, պարզապէս մի cella կարող էր լինել, ուրիշ ոչ մի բան:

«Տեկոյի տաճարը» զբոյցիս մէջ, փաստացի տպացուցանելու եմ աշխատած որ, հայկական եկեղեցիներու արեւելեան կողմէն դէպի հիւսիս և հարաւ ցցուած թևեր և այդ թևերու վրայ abside-ներ շինելու սովորութիւնը 6-րդ դարէն առաջ էր, նոյն իսկ Տեկոյի և իր նմաններուն վրայ այդ թևերը յետնագոյն յաւելուածներ են հնագոյն շէնքերու վրայ:

Ճիշտ Տեկոյի և իր նմաններու ձևով Տիրեկէրի եկեղեցւոյ արեւելեան կողմ ալ դէպի հարաւ ցցուած է թև մը, որոն վրայ պահ-

ուած է հնագոյն abside-ի մը մնացորդը: Թեթև քննութիւն մը ևս բաւական է համոզուելու որ այդ թևը յետնագոյն յաւելուած է աւելի հնագոյն շէնքի մը վրայ տարբեր քարերով և տարբեր արուեստագործութեամբ: Ուստի յամենայն դէպս այդ թևի յաւելումը կատարուած է 5-դ դարէն ոչ յետոյ և նախկին շէնքը կը պատկանէր հեթանոս պաշտաման: Եթէ համարենք որ այս շէնքը հեթանոսութեան վերջին դարուն կանգնուած էր, այն ատեն պիտի տեսնենք, որ թէև տակաւին չէր սկսած հրաբդիային աւազաքարի գործածութիւնը, սակայն սրբատաշ որձաքարի գործածութիւնը ընդհանրացած էր, որովհետև այս շէնքին թէ եօթը աստիճանները և թէ բուն շէնքէն երկու կարգ անհեթեթ մեծութեամբ քարեր մաքուր սրբատաշ են: Բնականաբար ամբողջ շէնքը որձաքարով էր շինուած, սակայն պարբերական նորոգութիւններ շատ են եղեր, որոնց ամենաուշը, իմ կարծիքով, 11-րդ դար, այդ նորոգութիւններու ժամանակ փոփոխեր և հրաբդիային աւազաքար շարեր են տեղերը:

Այս եկեղեցին լուրջ ուսումնասիրութեան արժանի է, որուն մասին առանձնապէս ուրիշ անգամ. այժմ միայն պիտի եզրակացնեմ այստեղ որ, եթէ հեթանոսական վերջին դարերուն սրբատաշ որձաքարի գործածութիւնը ծանօթ էր, հետևաբար անտաշ կոպիտ քարերով հսկայ պատեր ու շէնքեր շինելու սովորութիւնը աւելի հնագոյն ժամանակներու մէջ պէտք է որոնել:

Որպէս բոլորովին չուսումնասիրուած նիւթ, առայժմ կը զըժուարանամ վճռական կարծիքներ յայտնելու կիկլոպեան որմնաշինութեան ժամանակի մասին. ուստի գիտնական արուեստագէտներու ուշադրութիւնը հրաւիրելու համար այստեղ պիտի մատնանշեմ քանի մը ուշադրաւ մնացորդներու վրայ, որոնց տեղը, դիրքը և անոնց վրայ կատարուած գիտնական խուզարկութիւնները աւելի հեթանոսական դարերու քաղաքակրթութեանց հետքեր ցոյց տուած են քան քրիստոնէական:

Չեմ կրկներ այստեղ Տեկորի, Բագարանի և Երուանդակերտի մէջ տեսածներս. որոնց համառօտ նկարագրութիւնը տուեր եմ 1909 թ. «Ալլուրեանի» միջոցաւ: Նորադոյն հետազօտութեամբ ծանօթացածս կիկլոպեան մնացորդներէն մի քանի հատի վրայ պիտի տամ համառօտ տեղեկութիւններ համարելով խիստ ուշազըրաւ և ըստ ամենայնի շահեկան ուսումնասիրութեան համար:

Անիի շատ մօտիկ Ղօզլիճա (ի հնումս Բազմայր) գիւղի հարաւ արևելեան կողմին վրայ կայ մի բարձր բլուր, որ Ալաճալեբան ամէնէն ցած դազաթններէն մէկն է: Այս բլուրին կատարը ամբողջովին շրջապատուած է եղև երկու կարգ որձաքարէ կիկ-

լուսեան պարիսպով, երկու պարիսպներուն մէջտեղ 7-8 մետր լայնութեամբ դատարկութիւն կայ շուրջանակի: Կենտրոնին վրայ կանգնուած է եղբր նոյնպէս որձաքարէ բայց համեմատաբար փոքր քարերով մի բոլորակ շէնք, մօտաւորապէս 8-10 մետր տրամագծով: (Ճիշտ չափել անկարելի է փլատակի քարակոյտերու պատճառաւ): Պարիսպի արտաքին դուռը եղբր է արևմտեան կողմը՝ ուրիշ աւելի բարձր բլուր մը իրեն միացնող թևի վրայ: Ի՞նչ էր այս փոքրիկ շէնքը, ինչո՞ւ համար շրջապատուած էր կրկնակ ամուր պարիսպներով քրիստոնէական դարաշրջաններու բոլորովին անսովոր ոճով: Առայժմ չէ կարելի հասկանալ անոր նպատակն ու կոչումը, մինչև որ շուրջը պեղումներ չի կատարուին և լիովին չի հետազօտուին: Միայն մի բան շատ պարզ է որ Անիի և շրջականերու մէջ 7-րդ դարէն առաջ սովորական էր հրաբխային աւազաքարի գործածութիւնը, և Անիի շրջակայքը շատ հարուստ է բազմատեսակ աւազաքարի հանքերով, այս շէնքը շինուած է աւազաքարի գործածութիւնէն շատ առաջ, Կարելի է կարծել որ նոյնիսկ Անիի կենդանի շրջաններուն իսկ անուշադրութեան մատնուած էր այս շէնքը, ինչպէս հիմա ալ միմիայն մօտակայ քուրդ գիւղերու խաշնարածներուն միայն ծանօթ է Ղալա անունով:

Ալէքսանդրապօլէն դէպի հիւսիս արևմուտք մօտաւորապէս 6 վերստ հեռւորութեան վրայ Ղանլիճաի (ի հնումն Մարմաշէն) ձորին լանջի վրայ գտնուած բնեռա—արձանագրութիւնը ասինուն յայտնի է: Արձանագրութեան գտնուած տեղը երեք կողմէն ժայռի մէջ բացուած բնական փոս մէ մօտաւորապէս հինգ մետր լայնութեամբ և խորութեամբ, հարաւային կողմէն, որ բաց էր իսկզբան, մեծամեծ ժայռերով արհեստական պատ շինելով փակեր են, արևմտեան կողմէն միայն թողնելով մի փոքր մուտք: Ա. Նիկոյսիկ իր ուղեորութեան յիշատակարանին մէջ ւիտրը ժայռերով պարփակուած ընական զուիթճանուաներ է այս բնեռագիրը գտնուած տեղը, երևի նա չէ նկատեր հարաւային կողմի արհեստական պատը, և իսկապէս ալ դժուար է յանկարծ նկատել թէ մասնաւորապէս չի քննուի, որովհետև քարերը այնքան խոշոր են և կոպիտ կեցրով դրուած իրարու վրայ որ ընականի տպաւորութիւն կը թողու: Ի՞նչ կասկած կայ որ այս պատը շինուած է բնեռագիրը դրուած ժամանակ անոր պահպանութեան համար: Ահա այս պատին համար բացառապէս առանց վարանելու կրնանք ըսել թէ քրիստոնէութենէ ութ դար առաջ շինուած է Արգիշտի Ա-ի օրով, որովհետև արձանագրութիւնն ալ այս թագաւորին կը պատկանի:

Կիլկուպեան պատերու Թնացորդնիւր Բազարանէն, Տեկորէն և Երուանդակերտէն շատ աւելի մեծ չափով պահուած են դարձեալ Ալէքսանդրապօլէն դէպի հարաւ արևելք 10-12 վերստ հեռաւորութեան վրայ: Սա արդէն մի ահագին քաղաք է, մօտաւորապէս մէկ ու կէս քառակուսի վերստ տարածութեամբ, որուն մէկ ծայրին վրայ կը գտնուի Ղափըլի գիւղը: Այս հին քաղաքատեղին վրայ փռուած են անթիւ, անհամար բնակութեանց հիմեր, հսկայական որձաքարերով շինուած, որոնց մեծ մասը հողին հաւասարած են, վարուցանքի բոլորովին անընդունակ միայն որպէս արօտատեղի կը ծառայէ՝ այժմ: Գիւղին մէջ կայ մի հին բերդ, որ հաւանականաբար 10-11-դ դարերու գործ է, սրբատաշ հրաբլիսային աւազաքարերով շինուած: Սակայն այս բերդը կանգնուած է ուրիշ հնագոյն բերդի մը հիմքին վրայ, որուն քարերու ահաւոր մեծութեան վրայ մարդ չի կարող առանց ապշութեան նայել: ամեն կողմէ 6-7 մեթր բարձրացած է հին հիմը: Այս բերդէն զատ գիւղին արևմտեան հարաւային կողմը 2-2՝, վերստ հեռաւորութեան վրայ, բարձր բլուրի մը գագաթին, կայ մի ուրիշ բերդ՝ Թնացորդ, նոյնպէս հնագոյն շրջանի, որուն հիմերը հազիւ կը տեսնուին այժմ: Քաղաքատեղի ընդարձակ տարածութեան վրայ գիւղացիք միշտ կը գտնեն հեթանոսական գերեզմաններ, որոնց միջէն դուրս կուգան գլխաւորաբար Նուններ, ապարանջաններ, կճուճներ և սարկոֆաթներ:

Սարերէն յատկապէս կաւէ խողովակներով բերուած ջրերով օժտուած է եղեր քաղաքը, որոնցմէ այսօր ալ գիւղը կօզտուի: Այստեղ կան քանի մը մատուռներ և եկեղեցւոյ աւերակներ, որոնց ըովէն գտնուած քանտակագործութիւններու և հատուկտոր արձանագրութեանց ոճը 10-12 դարերու ոճին կը պատկանի: Գ. Վ. Բաբայեանցի հոգածութեամբ գտնուած քանդակներու և արձանագրութեանց մասեր Ազգադարական ընկերութեան Ալէքսանդրապօլի ճիւղի թանգարանը փոխադրուեցան:

Շատ ուշադրաւ է այստեղ գտնուած մի ահագին արուեստական բլուր, որուն երկայնութիւնը մօտաւորապէս 150 և լայնութիւնը 50 մետրի կը հասնի, գետնէն բարձրութիւնն ալ ոչ ղակաս 5-6 մէթրէն:

Այս բլուրին աւանդական անունն է Շահ-Թափա (Արքայաբլուր): Նաև մէկ կողմէն կը տեսնուի կրաշագախ պարիսպի հիւսիսը, որ ենթադրել կուտայ թէ միաժամանակ ալ պարիսպով շրջապատուած է եղեր ամբողջ բլուրը: